



Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Զ. — ՇՐՋԱՆ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԴ. ՅՈՒՆԻՍ

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՐԵՏԱՐԱՆԻ ԴՈՒՈՆ ԱՆՁՈՒԿ Է.

Մտէք ընդ նեղ դուռն . . . Գանդի ան-
ձուկ է դուռնն՝ և նեղ ճանապարհն, որ
տանի ի կեանս, և սակաւք են որ գտա-
նեն զնա. (Մատթ. Է. 13, 14):

Ես քրիստոնէութիւնից աւելի ընդարձակ բան չեմ ճանաչում.
չկայ մի գաղափար, որ նա չբովանդակէր իւր մէջ և նրան անսահ-
ման տարածութեամբ չընդարձակէր:

Զորօրինակ չառնե՞նք արդեօք Աստուծոյ գաղափարը. ի՞նչ էր նա հին աշխարհում: Իւրաքանչիւր ազգ ունէր իւր նեղսիրտ, բացառիկ, նախանձոտ և իրանց երկրպագուների կերպարանքով ստեղծուած աստուածները: Սոքա խիստ և մոայլ էին Հիւսիսի ազգերի մօտ, ճոխ և գեղեցիկ Յունաց մօտ, արիւնըռուշտ և հեշտասէր Ասիայում: Հազիւ այստեղ կամ այնտեղ մի փիլիսոփայի յաջողում էր բարձրանալ այս ժողովրդական գաղափարներից բարձր և եթէ Սոկրատէսի կամ Սենեքայի բանականութիւնը կարողանում էր ըմբռնել Աստուծոյ միութեան գաղափարը, բայց և այնպէս այդ վերացական ըմբռնումն չէր դառնում նոցա աչքում կենդանի էակ, առ որ նոքա կարողանային բարձրացնել իրանց հայեացքն և վերառաքել իրանց աղօթքները: Բայց յայտնուում է Յիսուս Քրիստոս և մի խօսքով քանդում է պատնէշներն, որոնք հոգիք բաժանում էին միմեանցից «Կգայ ժամն, երբ ոչ այս լերան վերայ, ոչ Երուսաղէմում կերկրպագէք Հօր . . . Աստուած հոգի է, հոգւով և ճշմարտութեամբ պարտ է Նրան երկրպագանել»: Ինչ որ վարդապետն ասաց, նոյնը քարոզեց աշխարհին և Ս. Պօղոսը. «Մի է Աստուած և Հայր ամենեցուն», քարոզում է նա հեթանոսներին, «Նովաւ կեամք և շարժիմք և եմք»: 18 դար անցել է այս ժամանակից և ես լսում եմ բոլոր իմաստուններին, որոնք պարծենում են, թէ Աւետարանից էլ բարձրացել են և ի զուր որոնում եմ նոցա մէջ գէթ մէկին, որ կարողանար ինձ տալու Աստուծոյ մասին աւելի ընդարձակ, վսեմ և փառաւոր գաղափար:

Առնե՞նք արդեօք մարդկութեան գաղափարը: Դուք գիտէք թէ ինչ էր նա հին աշխարհում: Ազգերն էլ իրանց աստուածների նման բաժանուած էին: Յոյնի և Հռովմայեցու համար օտարականը բարբարոս էր. ոչ մի վսեմ գաղափար չէր միաւորում հոգիք, ամենաքաղաքակիրթ ազգիւրի հասարակութեանց մէջ դէմ յանդիման կանգնած էին հարստահարողն և հարստահարեալը, ստրուկն և քաղաքացին, որ ազատ էր կոչուում: Այստեղ կամ այնտեղ որեւէ բարձրաթռիչ միտք հեռու խաւարի մէջ տեսնում էր համաշխարհային քաղաք, որ պէտք է ժողովէր իւր մէջ ազգերին և Կիկերոնը թոթովում էր, «մարդկային ազգի սէր» վսեմ խօսքերը: Բայց այս

ամենը սրտերի վերայ չազդող լոկ թոյլ ցնորքներ էին և աշխարհիս մէջ միակ իրացած միութիւնն էր ընդհանուր ստրկութիւնն, ընդհանուր ստորացումն մի բռնութեան ներքոյ: Բայց երևում է Քրիստոս և ասում է իւր հետևողներին. « Դուք ամենեքեան եղբարք էք, որովհետև մի է ձեր Հայրն, որ երկնքումն է»: Ս. Պօղոսը այս նութութիւնը աշխարհ տարածում է և ասում է հետևեալ զարմանալի խօսքերը. « չկայ այլ ևս ոչ Հելլէն և ոչ Հրէայ, ոչ բարբարոս և ոչ Սկիւթացի, ոչ ստրուկ և ոչ ազատ, ոչ արական սեռ և ոչ իգական: . . Աստուած մի արիւնից առաջացրեց բոլոր մարդկային ազգը»: 18 դարեր անցան այն ժամանակից, և ես ի զուր որոնում եմ մարդկային մտքի ստեղծած դրութեանց մէջ (սիստեմ) մէկն, որ ինձ կարողանար հաղորդել մարդկութեան մասին սրանից աւելի ընդարձակ, աւելի վսեմ և աւելի փառաւոր գաղափար: Ի՛նչ եմ ասում, այս գաղափարը մարդկային միտքն ոչ միայն աճեցնել չկարողացաւ, այլ ներկայումս հազիւ սկսաւ նրան ըմբռնել: Որպէս զի Ափրիկեցի Սեւամորթը, որի մարդկային արժանիքը նա ճանաչեց, կարողանար բռնել իւր իրաւացի տեղը ընդհանուր ազատութեան սեղանի մօտ, դեռ երեկ ևս հարկաւոր էր միլիոնից աւելի մարդոց կեանքը զոհել, և որպէս զի մենք սովորէինք հրաժարուել մեր եսականութիւնից և տեսնել, յարգել ու սիրել իբրև մեր եղբօր խեղճ, տրդէտ, բարոյապէս անկեալ արարածին, սորա համար հազիւ բաւական եղան Աւետարանի բոլոր հրաւերներն ու Աստուծոյ Հոգւոյ բոլոր ազդեցութիւնք:

Վերջապէս երբ խօսք է լինում մարդուս նշանակութեան մասին, տեսէք թէ նա ինչպէս բարձրանում է և վսեմանում քրիստոնէութեան լուսով: Մարդկերանցից ամենախեղճի համար անգամ նա նպատակ է դնում կատարելութիւնը. դեռ այստեղ, երկրիս երեսին, նա բաց է անում նորա առաջ յաւիտենական կեանքն, այն կեանքն, որոյ մէջ նորա բոլոր էութիւնը զարգանում է և նորագուում ըստ պատկերի Աստուծոյ, այն ինչ մահը տալիս է նրան բարձրանալու դէպի այս փառքը, դէպի այս անսահման զարգացումն, որոյ մասին Ս. Պետրոսը զարմանալի համարձակութեամբ խօսում է, մարդուս «Աստուծոյ էութեան մասնակից» կոչելով:

Վսեմ, բայց տխուր կոչումն և նշանակութիւն, ըստ որում նա ընտրեալ Հոգիների մէջ, որոնք ճշգուծեամբ հասկանում են այն, յարուցանում է անհանգստութիւն և խուլ վիշտ: Ինչիցն է այդ միշտ նրանց վշտացնող դժգոհութիւնը, որ առ ոչինչ է համարել տալիս նրանց իրանց կատարած բոլոր ճգնութիւնք և սխառագործութիւնքը: Ինչիցն է այդ ձգտումն դէպի անհասանելի նպատակն: Ինչիցն է այդ միշտ ընդարձակուող սէրն, որ աւելի և աւելի ընդլայնում է նոցա Հոգսերի շրջանն, որ նրանց զգայուն է անում ամենահեռաւոր վշտի և զրկանաց համար էլ, որ պատճառած է ում և իցէ աշխարհիս միւս ծայրում: Ինչիցն է այս ամենը. նրանիցն է, որ քրիստոնէութիւնը հրաւիրում է, կոչում է նրանց դէպի անսահման բարոյական կատարելութիւն, դէպի Աստուածանմանութիւն: Հարկ է արդեօք զարմանալ, որ աշխարհս ենթարկուում է այս ազդեցութեան: Հարկ է արդեօք զարմանալ, որ յառաջադիմութեան հաւատը ծնաւ այս վարդապետութեան ազդեցութեան ներքոյ և կարող եղաւ միայն քրիստոնէութեամբ իրագործուել: Հարկ է արդեօք զարմանալ, որ մինչդեռ բուդդայականութեան ու մահմետականութեան ազդեցութեան ներքոյ ազգերը թուլանում են և ծիւրում անյոյս բթամտութեան մէջ, գիտութիւնն, ազատութիւնն և լուսաւորութիւնը հետեւում են կրօնական ճշմարտութեան արեգակին, բարձրացող և յաղթական ընթացքով: Այո՛, ես էլի ի զուր որոնում եմ մի այնպիսի վարդապետութիւն, դրութիւն (սխտեմ) որ կարողանար բանալ մարդուս հոգու առաջ այնպիսի ապագայ, այնպիսի հեռանկար: Անշուշտ այդպիսի չէ այն առանց գաղափարի գիտութիւնն, որ, իրան դրական մականունը սեպհականելով, կամենում է փակել մարդուս սահմանի մէջ և արգելում է նրան փորձով հասու լինելու, թէ ինքն ուստի գալիս է և ուր է գնում, կարծես մարդս իւր սրտի մէջ չէ կրում անսահմանը, կարծես նա իւր հոգւոյ բոլոր դրդմանց և զգացմանց մէջ երես չէ դարձնում շօշափելի իրականութիւնից, կարծես նրան կարելի է գոհացնել, կոչելով նրան միայն ամենից բանաւորն ու իմաստունը կենդանեաց մէջ:

Այսպէս որ կողմից էլ որ նայում եմ Աւետարանի վերայ, ես

տեսնում եմ, որ նա անսահման չափով ընդլայնում է մարդկութեան միտքը, հետազոտութիւնքը, յոյսերն և համակրութիւնքը:

Բայց և այնպէս ամենուրեք, ուր միայն ճշմարտութեամբ քարոզուել է քրիստոնէութիւնը, նա միշտ մեղադրուած է եղել անձկութեան մէջ: Ես ասում եմ, ճշմարտութեամբ քարոզուած, որովհետեւ, ես գիտեմ, որ կայ մի տեսակ քրիստոնէութիւն, որ երբէք չէ արժանանում այն մեղադրութեան, որին աշխարհը տաւում է և որին նա հեշտութեամբ յարմարուում է: Սա այն քարոզիչների քրիստոնէութիւնն է, որոնք գտնում են միջոց ամենքին հաճոյանալու, իւրեանց ունկնդիրների գաղտնի բնազդումները շողորթելու, ապացուցանելու նրանց, որ վերջ ի վերջոյ էլի նոքա են ամենից լաւ և հաւատացողներ քան որքան կարծում են իրանք և միշտ նրանց իրանցից գոհ անել գիտեն: Այս այն թեթեւ հաւատն է, որ չէ վշտացնում, չէ վիրաւորում, չէ սարսափեցնում, բայց . . . և ոչ դարձնում է: Որ նրան չեն մեղադրում անձկութեան մէջ, այդ ինձ չէ զարմացնում, այլ ինձ վրդովում է այն, որ այդպէս քարոզած հաւատի մէջ լսում են Աւետարանի ձայնը:

Բայց ուստի է այդ յանդիմանութիւնը անձկութեան մասին, յանդիմանութիւն, որին միշտ ենթարկուում է ճշմարիտ քրիստոնէութիւնը: Հարկ է արդեօք դորա մասին բոլոր պատասխանատուութիւնը գցել նորա ներկայացուցիչների վերայ: Արդեօք մինչև այդ աստիճան թոյլ է մեր բնութիւնն, որ ճշգրտութիւնը գոյութիւն չկարողանար ունենալ, առանց անձկութեան մէջ ընկնելու: Այս վերաբերութեամբ անկեղծ լինինք մեր առաջ և վարժուենք խոնարհելու: Այո, ամեն ժամանակ քրիստոնեայք ընդարձակութեան, լայնասրբատութեան թերութեամբ իրանք վտանգի են ենթարկել իրանց այն գործն, որ պարտական էին պաշտպանելու: Սկսած առաջին աշակերտներից, որոնք հեռացնում էին Քրիստոսից Քանանացի կնոջ, կոյրին և այն մանկանց, որոց Քրիստոս կամենում էր օրհնել, ամեն ժամանակ Քրիստոսի հետևողները ճգնում էին դէպի նա տանող ճանապարհը դժուար հասանելի անել և յաճախ բոլորովին անհնարին: Քրիստոսի և հոգիների մէջ նոքա անջրպետ դնում էին՝ ոմանք — իրանց աւանդութիւնքն ու եկեղեցին, այլք — իրանց կարգերն

ու գրութիւնքը, իսկ ամենն — իրանց մոլորութիւնքը, նախապաշարմունքն ու իրանց Հոգեւոր Հպարտութիւնը, Մի կարծէք, թէ ես այստեղ ակնարկում եմ եկեղեցին բաժանող կուսակցութիւններից որ և է մէկի վերայ *), ես միայն մատնացոյց եմ անում բնական սրտի Հակամիտութիւնն, որ դժբաղդաբար, յայտ է գալիս ամեն կուսակցութեանց մէջ, և եթէ դուք ինձ կհարցնէիք, թէ նա ներկայումս ինչ ձեռով ու կերպարանքով երևում է, ես ձեզ կպատասխանեմ. «նա արտայայտուում է դատապարտութեան այն զգուելի Հոգւոյ մէջ, որ ուղղած է ոչ թէ վարդապետութեանց դէմ, որ իրաւունք ունինք քննելու և ճանաչելու, այլ անձանց դէմ, որոնց միայն Աստուած է ճանաչում և որոնց դատապարտելը մեզ արգելուած է: Ես այստեղ իմ բոլոր միտքս կարտայայտեմ, ես տանջուում եմ, երբ տեսնում եմ, թէ որպիսի թեթեամտութեամբ մենք ում կամենում ենք տալիս ենք կամ խլում քրիստոնէի անունը, կարծես փորձը մեզ ցոյց չէ տալիս մեր այս գործողութեան հարեանցիութիւնն ու կամայականութիւնը, կարծես մի աւելի պակաս լուսաւորեալ մարդ չէ կարող ծառայել Աստուծոյ սուելի հաւատարմութեամբ, քան մի այլ անձն, որոյ դաւանութիւնն աւելի ճիշդ է և կատարեալ, կարծես շատ մարդոց սիրտը հազարապատիկ աւելի լաւ չէ, քան խելքը, վերջապէս կարծես Աստուած մեր առաջ բաց է արել այս կամ այն մարդու ներքինն և նորան սպասող վերջնական վիճակը: Այս ասելից յետ, ես հարցնում եմ ինձ, արդեօք բաւական են այս պատճառաբանութիւնք բացատրելու համար թէ, ինչու Աւետարանը մեղադրուում է անձկութեան մէջ: Այ, եղբարք, այս մեղադրութեան իսկական պատճառն իրան Աւետարանի մէջ է: Եթէ նրան քարոզողները անմեղ էականներ էլ լինէին, մինչև անգամ հրեշտակներ, նա աւելի ազատ չէր մնալ այդ մեղադրանքից. ի՞նչ եմ ասում, արդեօք նրան (աւետարանը) աշխարհ չբերեց Սուրբն և արդարը, նա, որ էր ինքն սէրը: Իայց արդեօք Յիսուս Քրիստոս ազատ մնաց այդ մեղադրու-

(*) Քարոզիչը խօսում է բողոքական հասարակութեանց մասին:

թիւնից: Ո՛չ, նա ընդունեց այն, նա անձկութիւնը աւետարանի էական յատկութիւններից մէկն արաւ, Հէնց նա ասաց այս զարմանալի խօսքերը. «մտէ՛ք ընդ անձուկ դուռն»: Լնդունե՛նք ուրեմն այս խօսքն և Աստուծոյ օգնութեամբ աշխատենք նորա իսկական միտքը գտնելու:

Այս մտքի խորքը թափանցելով ես ամենից առաջ տեսնում եմ, որ աւետարանի ճանապարհը նեղ է, որովհետեւ նա ճշմարտութեան ճանապարհ է:

Այս միտքը կարող է նորօրինակ — յարակարծական թուիլ, բայց ամենապարզ դատողութիւնը կարգարացնէ նրան.

Լնդունե՛նք, որ Յիսուս Քրիստոս փոխանակ ասելու. «ես եմ ճշմարտութիւնը. Ո՛չ ոք չէ կարող գալ Հօր մօտ, բայց եթէ ինձ մով», ասէր. «ես եմ մէկն այն ճանապարհներից, որոնք տանում են առ Աստուած. դիցուք, թէ Ս. Պօղոս փոխանակ ասելու «չկայ փրկութիւն ոչ ոքի մէջ, բայց եթէ ի Քրիստոս» ասէր, որ մարդկութեան փրկութեան միջոցներից մէկն է Քրիստոս. դիցուք թէ Ս. Յովհաննէսը փոխանակ ասելու, «ով Յիսուսի Քրիստոսի վարդապետութիւնը չունի, նա չունի Հօրը», ասէր, թէ Յիսուս Քրիստոսի միջնորդութեամբ Աստծուն կարելի է ճանաչել աւելի լաւ. քան որեւէ այլ ճանապարհով. ընդունե՛նք, որ Ս. Պօղոսը փոխանակ ասելու «միայն մի հաւատ կայ», ասէր, որ ամեն անկեղծ հաւատ հաւասարապէս լաւ է. ընդունե՛նք մենք էլ, որ փոխանակ ձեզ ասելու, Աւետարանը քարոզելով, ահա ճշմարտութիւնը», ասէինք, «այս է մեր կարծիքը». այսպէս ասելից յետ կարծում էք արդեօք, որ այդպէս արտայայտած քրիստոնէութիւնը գէթ մի բոլոր կմեղադրուէր անձկութեան մէջ: Անշուշտ, ո՛չ. ինչո՞ւ ուրեմն լինում է այդ մեղադրութիւնը: Նորա համար, որ նա իրան արդարութիւն է համարում և քարոզում:

Երբ քրիստոնէութիւնը յայտնուեցաւ, աշխարհումս տիրում էր անսահման ներողամտութիւն. ամեն կրօններ, ամեն կարծիքներ դաւանուում էին, ամենատեսակ չաստուածաշարժութիւնք անարգել կատարուում էին: Հոռովմը իւր ամենընդարձակ տաճարը բաց էր արած իւր նուաճուած ազգերի ամեն չաստուածների համար և

այս Պանթէոնում — ամենադից մեհեանում կռոց արձանները հազարներով էին: Եթէ Կեսարի ժամանակի մի փիլիսոփայի, զորօրինակ Կիկերոնին, ասէին, որ շուտով արիւն կթափուի կրօնական գաղտնիքների համար. նա գուցէ դժգոհութեամբ կամ գոնէ երկբայութեան ժպիտով կմերժէր այդ միտքը: Բայց ահա, 100 տարի յետոյ, հռովմայեցի նահանգապետները պաշտօնական հաւատաքննիչներ դարձան, սկսեցան այն զարհուրելի հալածանքներն, որոնք պէտք է երեք դար շարունակուէին: Ինչիցն էր այս: Նրանիցն էր, որ քրիստոնեայք, Աւետարանն աշխարհ մտցնելով, չէին ասում. «ահա մի կրօն էլ», այլ ասում էին, «ահա ճշմարտութիւն»:

Այս անձկութիւնը տանելի չէր և այսօրքա շուտով հասկացան: Այժմ կրօնական ազատութիւնն արմատացել է մեր բարուց մէջ այնպէս, որ այլ ևս արմատախիլ չի լինիլ: Ես դրանից չեմ երկնչում, ընդհակառակն ուրախանում եմ: Վերջապէս աշխարհը հասկացաւ, որ մարդկային հոգին անմիջապէս կախումն ունի Աստուծոյէ, և ոչ մի երկրաւոր իշխանութիւն նորա վերայ իրաւունք չունի, երբ խօսքը նորա հաւատի մասին է: Ահա ազատութեան բուն սկզբունքը — իսկ աւետարանական և յիւրաքանչիւր աստուածային սկզբունք, որ մատնացոյց է արած Յիսուս Քրիստոս այն օրն, երբ ընդ միշտ ազատելով հոգին ամեն բռնութեան լծից, նա ասաց, «տուք զկայսերն կայսեր և զԱստուծոյն՝ Աստուծոյ, անմահ խօսքերը: Բայց ոչ միշտ այսպէս են հասկանում ազատութիւնը: Նատերի աչքում ներդաւանութիւնը սկեպտիկականութեան (երկբայութեան) դուստրէ և այս կողմանէ նա նրանց հաճոյական է: Մեր դարը զարմանալի ընդարձակութեամբ է վերաբերուում դէպի ամեն կրօնական կարծիքները:

Նա ոչ միայն նրանց արհամարհանօք չէ մերժում, ինչպէս անում էին 100 տարի առաջ, ոչ միայն նոցա վերայ չէ նայում, իբրև եկեղեցականներին վերաբերեալ գործի վերայ և խաբեբայութեան վերայ, այլ մինչև անգամ նրանց համարում է մարդկային հոգւոյ ազատ և խորին զեղմունք և այս հիման վերայ ժողովում է նրանց և հետաքրքրութեամբ ուսումնասիրում է նրանց և, եթէ նոքա վսեմեն և բանաստեղծական, նա վերաբերուում է դէպի նոքա յարգելի համակրա-

նօք: Բայց զի կրօնը, նրան ներկայանալիս, ասէ. «ես եմ ճշմարտութիւն», դրան նա տանել չէ կարող:

Հաւատացէք մեր փորձառութեան: Կայ մի գաղտնի բնագղումըն, որ ցոյց է տալիս մեզ, թէ մեր քարոզներում ինչն է հաճոյական և ինչն է վրդովում և վիրաւորում: Քանի որ մենք բաւականանում ենք հոգիքը շարժելով, նկարագրում ենք մեր բարոյական ախտերն և տանջանքը, հրաւիրում ենք դէպի մարդասիրական զգացմունքներ, մենք բնաւ չենք հանդիպում դիմադրութեան, բայց հէնց որ առաջ ենք բերում յայտնագործուած ճշմարտութիւնը, հէնց որ խօսում ենք յանուն մեզ սահմանափակող, կաշկանդող հեղինակութեան — իսկոյն ամեն համակրութիւնք հեռանում են մեզանից:

Բայց որպիսի գաղափար են կազմում մեր կոչման, պաշտօնի մասին: Ինչո՞ւ էք դուք այստեղ հաւաքուել: Արդեօք նորա համար, որ լսէք մի մարդու կարծիքը, Թէ՞ նորա համար, որ մենք ամենքս էլ միասին խօնարհենք Աստուծոյ ճշմարտութեան առաջ: Ահա հարց: Հարկ է ընտրութիւն անել Աւետարանի և դպրոցի մէջ: Իմ վերաբերութեամբ, ես ուղղակի ասում եմ, որ եթէ ես այլ ևս հաւատալիս չլինէի, որ Աւետարանն անպայման ճշմարտութիւն է, եթէ ես ձեզ այստեղ ոչինչ առաջադրել չկարողանայի բացի իմ կարծիքներից սեւ յոյսերիցս, որքան էլ սոքա վսեմ և միսթարական երևէին — ես կիջնէի այս ամբիոնից և փիլիսոփայութեան դպրոց կբանայի, ուր յանուն իմ բանականութեան, ես կդառնայի դէպի այլոց բանականութիւնքը, ինձ կհետեւէր ով կկամենար, բայց այնտեղ ես գոնէ կեղծ դրութեան մէջ չէի լինիլ, և իմ խիղճս հանգիստ կլինէր: Եթէ ես այստեղ մնում եմ, եթէ ես ձեզ այստեղ առաջադրում եմ, իմ թոյլ խօսքերով, ոչ թէ կարծիքներ, այլ հաստատ տեղեկութիւնք, ոչ թէ հարցեր, այլ պատասխաններ, դորա պատճառն այն է, որ ես միասին ձեզ հետ լսում եմ և պաշտում նրան, Ով ասաց աշխարհին՝ ես եմ ճշմարտութիւն:

Բայց և այնպէս, ամեն այլ ասպարեզներում, մեր սերունդը ամենայն յօժարութեամբ լսում է ճշմարտութիւնը: Զորօրինակ նա գիտէ, որ գիտութեանց մէջ միայն ճշմարտութիւնն է լաւ, օգտա-

ւէտ և արդիւնաւոր: Նրբ մի գիւտ անող, յայտնի երևոյթների իսկական օրէնքը գտնելով, առանց տատանման մի կողմն է թողնում բոլոր նախկին բացատրութիւնք և ստում է. «ահա ճանապարհն, որով հարկ է ընթանալ» — անշուշտ ոչոք նրան չի մեղադրիլ անձկութեան մէջ, ընդհակառակն նրան կհետեւեն այդ ճանապարհով. ամեն ոք զգում է, որ անմտութիւն կլինէր անտարբեր մնալն կամ կանգ առնելն այդ գիւտի առաջ, այլ և հաստատելը, թէ ամեն ճանապարհներն էլ լաւ են, ամեն բացատրութիւնք ճշմարտանման են: Ինչու կրօնի գործում այլապէս են վարուում:

Ինչու, եղբարք: Որովհետեւ այլ ճշմարտութիւնք բնաւ չեն շօշափում մեր բարոյական անկախութիւնն, ընդհակառակն, դեռ մեր նիւթական բարօրութեան նպաստում էլ են: Այսպիսի չէ կրօնական ճշմարտութեան բնաւորութիւնը. Սա — եթէ միայն նա գոյութիւն ունի — պէտք է ամեն բաների ճշմարտութիւնը լինի. նա պէտք է իշխէ մեր մտքերի ու կամքի վերայ: Այլապէս ի՞նչպէս կարող էր լինել: Կրօնական ճշմարտութիւնը — սա կրկին գտնուած Աստուածն է, իսկ մեր յարաբերութիւնը դէպի Աստուած կարող է լինել միայն հնազանդութեան, հպատակութեան յարաբերութիւն. եթէ Յիսուս Քրիստոս ասում է ճշմարտութիւն, դուք չէք տեսնում արդեօք, որ այդպիսի դէպքում իմ բոլոր կեանքս պէտք է ուղղած լինի դէպի այն նպատակն, որ նա ինձ ցոյց է տալիս և որ ես պէտք է հրաժարուիմ իմ հպարտ անկախութիւնիցս: Բայց ուզում են պահպանել իրանց անկախութիւնը, և պահանջում են ազատութիւն կեանքի, պարտականութեան, Աստուծոյ, յաւիտենականութեան վերաբերմամբ հաւատալու այնպէս, ինչպէս իրանց հաճոյ է: Անտանելի է նրանց Աստուծոյ պատրաստ ճշմարտութիւնն ընդունելը, ճշմարտութիւն, որ երկրպագութիւն է պահանջում: Սորա պատճառն այն է, որ մարդուս իմացականութեան հպարտութեան մէջ կան գաղտնի և խորհրդաւոր բաւականութիւնք, որոնք արբեցնում են նրանց, ոյք խորասուզուում են նոցա մէջ — բաւականութիւնք որոնք բոլոր զգայական զուարճութիւններից բարձր են: Ինչպէս քաղցր է մտքի ազատութիւնը, մտքի, որ ոչնչով կաշկանդուած չէ, որ կարող է ազատութեամբ ճախրել մարդկային կարծեաց և համոզ-

մանց եթերում, առանց սրանցից մէկին էլ ենթարկուելու, իւրաքանչիւրից քաղելով այն, ինչ որ հրապուրիչ է և մերժելով, որ ինչ խիստ է, ինքն իրան մոռանալով այս խաղի մէջ, որ զբաղեցնում է և գոհացնում մարդուս անյազ քննասիրութիւնը: Եւ ինչպէս նախանձեղի է ներկայումս ընտիր կրիտիկոսի և սրամիտ անձնաւորութեան համբաւը:

Միթէ կայ աւելի մեծ բաւականութիւն քան արհամարհելն ամեն պայմանական գաղափարները, քան շատ բարձրից նայելը մարդկային կարծեաց և կրքերի պատերազմի վերայ, ամեն ինչ իբրեւ դատաւոր գնահատելն և երբէք ճշմարտութեան գերի չդառնալը: Ահա այստեղ է ժամանակակից քննադատութեան վտանգը, քննադատութիւնը մեծ է և արդիւնաւոր, երբ որոնում է ճշմարտութիւն, որպէսզի սրան ճանաչէ և յարգէ, իսկ մահուան և լուծման զօրութիւն է դառնում, երբ դադարում է ճշմարտութեան հաւատալ:

Ո՛հ, ո՞վ չէ ճանաչում այն ախտաւոր — հիւանդոտ սկեպտիկանութիւնն, որ անընդունակ է դրական ինչ ասելու և մի եզրակացութեան հասնելու, որ միշտ որոնող և երբէք չգտանող է, յաւիտեան կարծիքների ու տպաւորութեանց ետեւից ընկած է և երկրնչում է ճշմարտութեան նեղ ճանապարհի վերայ կանգնել: Ո՞վ չէ առել նորա սարսափելի զօրութեան փորձը թշուառ ըողպէներին, երբ մարդուս խիղճը լռում է և հոգին մոռանալով իւր կոչումն, անձնատուր է լինում ներկայ մեղկացուցիչ գայթակղութեանց:

Զգուշանանք, եղբարք, շատերը նրան անձնատուր լինելով մեռան, զրկուելով ճշմարիտ կեանքից. որովհետեւ նոքա անցան ճշմարտութեան մօտով, առանց նրան հետեւելու և հրաժարուելով նրան անձնուիրութեամբ և հեզութեամբ ծառայել, նոքա անընդունակ դարձան նրան ճանաչելու և վերջացրին իրանց կեանքը Պիլատոսի խօսքերով, թէ «ի՛նչ է ճշմարտութիւնը»: Զէ կարելի առանց պատժուելու խաղ բռնել այն բանի հետ, որինչ ամենասուրբն է և ամենից նշանաւորն երկրիս վերայ. մինչև անգամ ատելութիւնն այնպէս վտանգաւոր չէ, ինչպէս այդ թեթեամտութիւնը: Ո՞վ տանտանուող հոգիք, անհաստատ հանճարներ. ձեր փրկութիւնը հաւատի և հնազանդութեան մէջ է. մտէք անձուկ ճանապարհը, սա

միայն է, որ տանում է դէպի կեանք:

Երկրորդ՝ ես պնդում եմ, որ եթէ աւետարանի ճանապարհը անձուկ է, դորա պատճառն այն է, որ նա սրբութեան ճանապարհ է:

Աւետարանական բարոյականութիւնը միշտ չէր հնթարկուում անձկութեան մեղադրանքին. սկզբում մեղադրում էին նրան ընդարձակութեան մէջ: Յիսուս Քրիստոսին իւր ժամանակի խստակրօնները յանցաւորաց ցանկի մէջ դրին: Նոցա կարծիքով նա «պաշտօն չէր անում», բարեկամ մաքսաւորաց և մեղաւորաց: Ինչպէս կարող էր փարիսեցւոյ ոգին ըմբռնել և ընդունել նորա վարդապետութիւնն, որ Հակառակ էր արտաքին բարեպաշտութեան, ցուցամոլական ողորմածութեան, արտաքին մաքրութիւնը ներքինից նախադասելուն: Ապա ի՞նչ Հարկ էր մտածել ուսուցչի, մարգարէի վերայ, որ ըստ երևութին սկսում էր մօտենալ նրանց, որոնց անմաքուր, բորոտ, մաքսաւոր, ամենատելի արարածներ էին կոչում և որ Հրէաների Համար օրինակ էր բերում Հեթանոսներին: Փարիսեցիք ու դպիրներն ի՞նչպէս չվրդովէին, չապստամբէին: Աւետարանի ընդարձակութիւնը գլխաւոր պատճառներից մէկն էր, որոնք կանգնեցին Յիսուսի Քրիստոսի խաչը:

Այժմ՝ զարմանում են այդ մաքուր Հոգեւոր վարդապետութեան վերայ, որ Հաստատում է ամեն ինչ, որ սուրբ է և բարի, և որ վճռողապէս մերժում է ամեն ձեւաւոր պատուէրներն, նման այն ալպեան սառնակոյտերին, որոնք կազմուելիս մերժում են իրանցից ամեն օտար տարր, ամեն աղտ, որ խառնուում է նոցա ջրի մէջ: Զարմանում են այն բարոյականութեան վերայ, որը 18 դարեայ աշխատանքը կարիք չունեցաւ ընդարձակելու և որ ներկայ ժամանակի մարդուն էլ այնպէս բաւարարութիւն է տալիս, ինչպէս և նոցա, որոնք առաջին անգամ նրան լսեցին, — զարմանում են այն բարոյականութեան վերայ, որ ամենից մարդասիրականն է, որպիսին միայն երբ և իցէ եղել է, որ յանչափս անձնատուր է բարեաց ու մի և նոյն ժամանակ թշնամի մոլեռանդութեան, զարմանալի կերպով իմաստուն և մաքուր ու ազատ է շահամոլութեան ոգուց, բարոյականութիւն, որ գուցէ աւելի անսովոր է նրանով, որինչ ներում է,

քան նրանով, որինչ արգելում է և որ բանալով հոգու առաջ աւելի վսեմ և բարձր ձգտումներ, մի և նոյն ժամանակ կատարելապէս ճանաչում է բնական սրտի բոլոր թուլութիւնքը, նենգութիւնքն ու բոլոր աղքատութիւնը: Այսպէս նորա վերայ զարմանում են, յօժարութեամբ տալիս են նրան առաջին տեղն և այս դատավճռի մասին ամեն ձայները համաձայն են. մինչև անգամ մեղաւոր մարդիկ այս մասին համաձայն են այլոց հետ, որովհետև մեղաւորներն էլ ունեն իրաւունքներ, որ նոքա պէտք է պաշտպանեն, ուստի և նոքա չեն կարող անտարբերութեամբ վերաբերուել դէպի բարոյականութիւնը — սա հարկաւոր է նրանց, գէթ նորա համար միայն, որ հովանաւոր և պաշտպան լինի նրանց. ճարպիկ եսասէրը կդողար մտածելով որ ապրելու է այն հասարակութեան մէջ, որ կազմակերպուած է իրան նմաններից. նա հակառակ չէ վարդապետութեան, որ այլոց զոհաբերութիւն ու անձնագոհութիւն է քարոզում: Այսպէս ոմանց շահը, միւսների ոգևորութիւնն և շատերի սէրն ու խոնարհութիւնը — այս ամենը միանում են, որպէսզի յօգուտ աւետարանական բարոյականութեան ստեղծեն յաջող նախապաշարմունք, որ նմանում է ընդհանուր համակրութեան:

Բայց դուրս եկէ՛ք այս ընդհանրութիւնից և վեր առէ՛ք բարոյականութիւնն իւր սկզբունքով և հոգւով, ուսուցէ՛ք Ս. ¹⁾Օղոսի հետ, որ Աստուծոյ փառքը պէտք է լինի ձեր բոլոր գործողութեանց ու մրտաժմանց շարժառիթը, ասացէ՛ք Յիսուս Քրիստոսի հետ, որ նոյն իսկ ցանկութիւնն արդէն յանցանք է, որ ատելութիւնն արդէն սպանութիւն է — մի խօսքով, մեղքի վերայ լըջութեամբ նայեցէ՛ք և դուք կտեսնէ՛ք, թէ որպիսի հակակրութիւնք, որպիսի բարկութիւն, որպիսի դիմադրութիւն հանդէս կգայ ձեր դէմը՝ անձկութիւն, խստակրօնութիւն — դեռ սոքա ամենամեղմ խօսքերն են, որոնք ձեզ վերայ կ[թափեն: Դուք բաղդաւոր կլինիք, եթէ պարզ շիտակութիւնն երեսպաշտութիւն չի անուանիլ այն չափազանցութիւնն, որ նրան վրդովում է և խռովում:

Բայց ի՞նչ են ուրեմն ուզում: Աւետարանական բարոյականութիւնից նորա գաղափարը խլել. բայց այս կնշանակէր միանգամով խլել նրանից նորա եւ մեծութիւնն եւ միութիւնը. նրան պակաս

Հոգևոր անել. բայց այս կնշանակէր արդէն չարիք ներմուծել ոչ թէ դիտաւորութեան, այլ նոյն իսկ գործողութեան մէջ, այս կնշանակէր ընկնել կատարեալ փարիսեցութեան մէջ: Սարսափելի բան. եթէ դուք մարդուն առաջարկում էք աւելի պակաս բան, քան ինչ առաջարկում է Աւետարանը — աւելի պակաս քան սէր առ Աստուած և առ մերձաւորը, եթէ դուք մազի չափ մեղմէք այս օրէնքը — նա ամբողջապէս կխախտուի, դուք այլ ևս ոչ թէ օրէնք կունենաք, այլ ցիր և ցան եղած պատուէրներ, որոնք իւրաքանչիւր ոք ըստ իւր ճաշակի կբացատրէ:

— Իսկ այս ճանապարհը շատ նեղ էք համարում, դուք ցանկանում էք նրան ընդլայնել, ընդլայնել. բայց ի՞նչպէս. Ա՛հ, ես ձեզ հասկանում եմ: Իւրաքանչիւր ոք կցանկանար պահպանել իւր հակամիտութիւնքը՝ մէկն իւր փառասիրութիւնը, միւսն իւր յանցաւոր հակումները, երրորդը — թշնամութիւնքը. իսկ ամենքն էլ — իրանց գաղտնի կուռքերը: Ոչինչ նրանց այնպէս չէ վրդովում, ինչպէս աւետարանական խօսքը, թէ կենդանի, սուրբ և ամբողջութեամբ անձնագոհութիւնը քրիստոնէի միակ իմաստունն ու խոհեմ պաշտօնն է:

Ի՛նչ. թող ընդլայնենք նրան, թող ըստ ձեր ցանկութեան լինի: Կազմենք Աւետարան ըստ ձեր ճաշակի և դուք գոհ կմնաք: Յիրաւի գոհ կլինիք: Բայց ով երաշխաւոր կլինի, որ դուք եգուց ել գոհ կլինիք: Ով կերաշխաւորի, որ ձեր կիրքը, աւելի ագահ ու ատելի դառնալով, չի պահանջիլ նոր գիշողութիւնք: Ընդունենք, որ դուք կարող էք նրանց (կիրքը) սահմանի մէջ պահել, բայց ով կարող է ինձ հաւաստիացնել, որ և մի այլ ոք ևս ձեզ նման կարող կլինի չափաւորուել և յանուն ընդարձակութեան, որ դուք պահանջում էք, չի խախտիլ բոլոր խոչընդոտներն, որոնք նորա հաճոյից հակառակ են: Թող կորչի անձկութիւնը կասէ հեշտասիրութիւնը: Կորչի անձկութիւնը. խմբովին կպատասխանեն ցանկութիւնք և կրքերը: Տուէք մեզ լայն ճանապարհը, թող կորչեն կրօնական նախապաշարմունքները, վախեցած հոգիների դադարկ կասկածոտութիւնը, այդ ամեն շղթաներն, որոնք այնքան նրկար ժամանակ կաշկանդել են մեզ. Մենք ուրախութիւն ենք ցանկանում,

մենք կամենում ենք ներկայ ժամը վայելել ամենայն բաւականութեամբ, ազահութեամբ կամենում ենք զուարճութեանց բաժակը դարդակել, որով բազդաւորներն իրանց ծարաւը հանգցրել են: Եւ բոլոր ցանկութեանց ու կրքերի այս սարսափելի պատերազմում անտարակոյս յաղթութիւնը կպատկանի ամենավայրենի և ամենազօրեղ եսականութեան: Ահա մարդկային ընդարձակութեան վերջին խօսքը: Ես գիտեմ, որ դուք մինչև այդ տեղը չէք հասնիլ, բայց արդեօք մի հայեացքն էլ բաւական չէ՞, որ կշռէք և հասկանաք, թէ որպիսի սարսափելի հետեանքների կհասցնէ Աստուածային օրէնքը մեղմելը, թլացնելը: Այսպէս, եղբարք, պէտք է երկուսից մէկն ընտրել՝ կամ կրքի անսահման լայն ճանապարհը կամ սրբութեան նեղ ճանապարհը:

Մի քայլ ևս անենք: Աւետարանի ճանապարհը նեղ է, որովհետեւ նա խոնարհութեան ճանապարհ է:

Ես ցոյց տուի, որ նա չէր կարող թոյլատրել մեզ մեր կրքերն ու յանցանքներն. այժմ ես պնդում եմ, որ նա փակ է և առաքինի հպարտութեան համար էլ: Խոնարհել, խոստովանել առանց պատիպատոյ բանից, թէ ինչ արժէք ունենք մենք Սրբութեան Աստուծոյ աչքում, հրաժարուիլ մեր առաքինութիւններից, մեր կարծեցեալ սխրագործութիւններից և ընդունել փրկութիւնն իբրև շնորհք — ահա, եղբարք, մեզ վայել միակ դիրքը. բայց որքան դառն է և ծանր այս բնական սրտի համար:

Ահա ինչու Աւետարանը շատ նեղ է շատերի համար: Ինչպէս յօժարութեամբ նոքա կանէին մեծամեծ գոհաբերութիւնք, եթէ այդ փրկութիւնն իրանց գործը լինէր, եթէ դրանով նոքա կարողանային արժանանալ երկնքին: Շնորհք, այսինքն կատարեալ ներդուլութիւն, շնորհք, առանց որոյ Աւետարանն ոչ այլ ինչ կլինէր բայց եթէ Սինայի օրէնքից աւելի անողոք մի օրէնք — որքան հակառակութիւնք ու արգելքներ է նա յարուցանում: Բայց և այնպէս այս միակ ճանապարհն է, որով անկեալ արարածները կարող են հաղորդութեան մէջ մտնել Սուրբ Աստուծոյ հետ: Ուրեմն Աստուած ինքըն է նրան այդպէս նեղ արել: Դուք դատեցէք: Ահա խորին գիշեր է, տունը բոցով պատած է, սարսափի ձայներ են լսուում, որով-

Հետև այնտեղ, այդ Հնոցի մէջ քնած է թշուառականն, որ շուտով բոցի զոհ կդառնայ: Նա զարթում է, սարսափով նայում է իւր շուրջը. նորա առաջ միայն մի ազատ ելք կայ, իրաւ է նեղ, բայց բաւական է կեանքն ազատելու համար: Ի՞նչ է նա անում: Նա տենդային շտապով, ագահ ձեռքով հաւաքում է, ինչոր փրկել կարող է իւր կայքից և իւր գանձերով ծանրաբեռնած, բեռան տակ ճնշուած, հասնում է մինչև այդ դուռը. բայց սա թոյլ չէ տալիս նրան անցնելու. «Ինձ մօտ, աղաղակում է նա այն ժամանակ, ինձ մօտ եկէ՛ք. դուռը շատ նեղ է»: Ո՛հ, խեղճ անմիտ, թո՛ղ քո գանձերդ, որոնք կեանքովդ պիտի գնես, թո՛ղ ամեն ինչ, որ քեզ արգելք է լինում, համաձայնի՛ր ամեն ինչ զոհելու. դու միայն սրանով ազատուել կարող ես: Դուք ինձ հասկացա՛ք, եղբարք. այդ այրուող ու քանդուող տունը մեր կեանքն է, լափող բոցը — Սուրբ Աստուծոյ դատաստանն է, այդ բաց դուռը — ներողութիւնն է, իսկ այն գանձերն, որոնք մեզ ի կորուստ մատնում են, այն յատկութիւնքն են, առաքինութիւնք, սխրագործութիւնք, որոնց դուք մեծ գին էք դնում: Այո՛. երկնքի դուռը շատ նեղ է այն մարդոց համար, որոնք հպարտանում են իրանց արդարութեամբ, ահա ինչու Աւետարանը նոցա մէջ թշնամութիւն և վրդովմունք յարուցանում է: Եւ մարդկային անմիտ հպարտութիւն. մինչդեռ ամենից սուրբ հոգիք, որ պիտիք միայն ունեցել է աշխարհս, հոգոց են հանում մտածելով իրանց անհաւատարմութեան վերայ և մաղթում են Աստուծոյ շնորհքն՝ ողորմութիւնը, մենք պէտք է հանդիսատես լինենք ուրախութեամբ այնպիսի արարածների, որոնց երկարատև կեանքը Աստուծոյ աչքի առաջ շղթայ է եղեռնագործութեանց և ապերախութեանց — անձանց ակնատես լինենք, որոնք ունենալով հանդերձ իրանց կեանքի վերայ, ինչպէս դուք և ես, սև արատներ, որոնք նոքա ոչոքին չէին ցոյց տալ աշխարհումս — մերժում են շնորհքն, իբրև մի յոյժ ստորացնող բան, նեղանում են, որ նրանց առաջարկուում է ներողութիւն և խօսում են իրանց առաքինութեանց վերայ, իրանց բարի գործերի վերայ առանց մտածելու որ միայն իրանց հպարտութիւնը ոչնչացնում է նրանց յաչս արդար Դատաւորին և այսպէս գնում են նոքա ընդառաջ մահուան, միայն

արդարադատութիւն պահանջելով Խաչի առաջ, որ նրանց ողորմածութիւն է առաջարկում: Նոքա պահանջում են իրանց իբրեւ թէ իրաւացի տեղը սրբոց ժողովի մէջ, այն ամենամաքուր լուսոյ մէջ, ուր Աստուած է, առանց կարծելու, որ արդար Պատաւորի մի Հայեացքը հերիք է, որ իւր զարհուրելի լուսով նոցա գաղտնի կեանքի խորքը լուսաւորելով դատապարտէ նրանց: Ո՛հ եղբայրք, օրհնենք և շնորհակալ լինենք Աստուծոյ, որ փարատեց մեր կուրուքիւնը, վրդովեց մեր մարմնաւոր անհոգութիւնն և ընդունենք փրկութիւնը իբրեւ ողորմութիւն, քանի որ նա մեզ առաջարկուում է: Մտնենք նեղ ճանապարհն, որովհետեւ նա տանում է դէպի կեանք: Վերջապէս ես պնդում եմ, որ Աւետարանի ճանապարհը անձուկ է, որովհետեւ նա սիրոյ ճանապարհ է:

Նա գիտեմ, որ այսպիսի միտքը կարող է տարօրինակ երևել: Մենք սովոր չենք անձկութեան գաղափարը սիրոյ գաղափարի հետ միացնել. ներկայումս ընդհակառակն սովորաբար ասում են, որ սիրոյ կրօնի մէջ այսուհետեւ պէտք է միանան ամեն գաղափարները, ամեն կարծիքներն, որոնք մինչև ցայժմ բաժանում էին մարդոց: Աստուած սէր է. ասում են մեզ, ուրեմն իսկապէս նորա համար ինչ նշանակութիւն ունեն մեր մոլորութիւնքն ու թուլութիւնքը: Ի՞նչպէս կարող են անցաւոր արարածների գործերը վրդովել ամենաբաւական Եակի խաղաղութիւնը: Թողէք, ուրեմն, ով հաւատացողներ, ձեր դատաստանները, ձեր դատապարտութիւնքն ու նզովները. բաց արէք մոլորեալ արարածների առաջ ողորմածութիւնն: Ինչու էք թունաւորում նոցա վաղանցուկ ուրախութիւնը, ինչու էք վրդովում նոցա զուարճութիւնքը: Մարդը՝ շատ թոյլ է և նորա կեանքն վաղաթաւում: Այսպէս են խօսում այժմ և մինչև անգամ անբարոյական երկասիրութեանց մէջ գովաբանում են Աստուծոյ սէրը: Այո՛, անմաքուր բերաններից բղխում են խորհրդաւոր զեղմունք Աստուծոյ սիրոյ մասին: Այո՛, այդ սրբութիւնը, այդ սրբութիւնը սրբոց, ուր մտնել հարկ էր զոլութեամբ, այժմ դարձել է տեղ, ուր ամեն ոք դնում է իւր գաղափարներն և իւր անհաւատութիւնն, իւր յանցանքներն ու մինչև անգամ իւր հայհոյութիւնները:

Գիտէ՞ք, ինչ է թագնուած այդ մտքի տակ: Այստեղ զգուելի սրբապղծութեան հետ միացած են ատելի եսականութիւնն ու հպարտութիւնը: Աստուած սէր է, ասում են մեզ՝ ուրեմն մենք ազատ ենք — ազատ ենք մտածելու, սիրելու և գործելու ըստ մեր ցանկութեան: Թո՛ղ կորչի աններողամտութիւնը: Երկինքն ամենքի համար բաց է: Ահա ինչն է անտանելի:

Ո՛հ անտարակոյս քրիստոնէութիւնը բոլորովին կարող է ամփոփուել սիրոյ մէջ: Բայց որպիսի՞ վիճ է աշխարհի հասկացած սիրոյ և աւետարանական սիրոյ մէջ: Այո՛. Աստուծոյ սէրն է ինքը կրօնը, բայց ի՞նչ է սէրն և ի՞նչ է Աստուած: Այդ — Աստուած է, Որոյ առաջ հրեշտակներն էլ պէտք է ծածկեն իրանց երեսները, այդ նախանձոտ Աստուած է, Որ միայն կամենում է իշխել սրտերի վերայ և Որ չի համբերիլ ոչ մի կռքի երկրպագութեան:

Այսպէս ուրեմն սէրն, որ նա մեզ բերում է, պէտք է լինի սուրբ, ինչպէս նա է և այն սէրն, որ մենք նրան ենք նուիրում պէտք է նոյն բնաւորութիւնն ունենայ: Նա անձուկ է այն մտքով, որ մեր ժում է ամեն ինչ, որ նրան ատելի է և հակառակ: Նա որոնում է Աստծուն, այսինքն, նա չէ կարող անտարբեր մնալ դէպի ամեն ինչ, որ Աստծուն է վերաբերում: Ինչ որ վիրաւորում է Աստծուն, վիրաւորում է և նրան, ինչ որ անպատուում է Աստծուն, նոյնն անպատուում է և նրան: Այսպէս ուրեմն, թո՛ղ հեռանայ մեզնից այն ընդհանուր և ատելի ներողամտութիւնն, որ կամենում են ծածկել աւետարանի պաշտպանութեան ներքոյ: Քրիստոնէական սէրը տածում է եռանդուն ատելութիւն դէպի ամեն ինչ, որ նրան հակառակ է, ըստ գեղեցիկ բանից Սաղմոսերգուին, թէ «Ամենեքեան, որոնք սիրում էք Եհովային, ատեցէ՛ք չարիքը»: Նա ոչ միայն հաւանութիւն չէ տալիս անտառքերութեան. այլ և ատում է նրան և եթէ մեղաւորների վերաբերմամբ նա կոչուում է անսահման ողորմածութիւն, մեղքի վերաբերմամբ — նա անընկճելի, անողոք սրբութիւն է:

Այստեղ ես հէնց ձեզ վկայ կբերեմ: Արդեօք այդպէս չէք սիրում և դուք, որոնք գիտէք սիրել: Ո՛վ մայր, արդեօք դու անտարբեր մնում ես, երբ քո զաւակի սիրտն անձնատուր է լինում ամեն

կրքերին, ամեն խայտառակ հակամիտութեանց, որոնք հրապուրում են նրան: Ո՛վ կին, արդեօք թոյլ կտաս դու, որ նա, որ երդուել է քեզ՝ հաւատարիմ լինել, ընդարձակութեան անուամբ խորասուզուի նրան յափշտակող դայթակղութեան մէջ: Ո՛հ, քո սէրդ անձուկ է—անձուկ է, որովհետեւ նա սէր է—որովհետեւ այն օրն երբ նա դադարի անձուկ լինելու, երբ դու յանձն կառնուս քո ամուսնոյդ սիրոյ մի մասը բաժին հանել օտարին, երբ դու անտարբեր կլինիս ու սառնասիրտ դէպի այդ խայտառակութիւնը—նոյն օրը քո սրտիդ կրակարանում հանգած սիրոյ փոխարէն մնացած կլինի միայն մոխիր:

Ի՛նչ միթէ դուք կարծում էք, որ Աւետարանի Աստուածը ձեզանից աւելի պակաս է պահանջում, քան որքան կարող է պահանջել մի արարած միւսից: Ո՛վ կարող է մեզնից պահանջել մեր սիրտն, եթէ ոչ նա, որ նրան ստեղծել է: Ինչպէս գթոյ այն գանձերն, այն անդիմադրելի ձգտումները, համակրութեան բոցակէզ ծարաւը, զարմանալու ու պաշտելու այն եռանդը—մարդկային սրտի այս բոլոր զօրութիւնքն—որոնք Աստուած հաստատել է մեր մէջ, միթէ նա ինքը միայն չպիտի ունենայ իրաւունք դոցա վերայ: Կհամարձակեմ ասելու, որ այն Աստուածն, որ կպահանջէր ձեզանից աւելի պակաս բան, քան անպայման զոհաբերութիւն, պակաս քան ձեր կեանքն ու սիրտը,—այդպիսի Աստուածը կդադարէր ձեր հաւատի և երկրպագութեան առարկայ դառնալու: Ահա ինչու աւետարանական ճանապարհն անձուկ է: Ով սորա վերայ կկանգնի, նա այդ բոլորից այլ ևս ուրիշ նպատակ չէ ունենում, ուրիշ աւելի բարձր փառասիրութիւն չէ ունենում, բայց եթէ ի բոլոր սրտէ Աստուծոյ ծառայելու: Ահա, ինչ է սարսափեցնում ձեզ, ով աշխարհասէրք, — ես լաւ գիտէի, որ մենք չենք կարող ձեզ հետ համաձայնութեան հասնել: Այս բացառական սէրը ծանր է ձեզ համար. բոլոր կեանքը Աստծուն նուիրել, նորա մէջ և նորա համար միայն սիրել ամենայն ինչ, կորուսանել իւր կեանքը նորա համար—ինչպէս ասում է Ս. Աւետարանը—ահա չափազանց անձուկ ճանապարհը այն սրտի համար, որ միայն և եթ իրմով է զբաղուած: Բայց և այնպէս հարկ է ընտրել երկուսից մէկը՝ կամ եսասիրութեան լայն ճանա-

պարհն, որոյ վերայ ազատում են իրանց կեանքն իսկապէս սրան սպանելու համար կամ սիրոյ անձուկ ճանապարհն, որոյ վերայ կորցնում են իրանց կեանքը Աստուծոյ համար, որպէս զի նրան գտնեն:

Եղբարք, ես ցոյց տուի ձեզ, թէ ինչու Աւետարանի ճանապարհն անձուկ է և որքան էլ թոյլ է իմ խօսքս, բայց եթէ ես չեմ սխալում, ձեր խիղճը համաձայնում էր ինձ հետ: Այժմ ժամ է վերջացնելու: Եթէ իմ ունկնդիրներիցս թէզուզ մէկը, իւր սրտի խորքում, արտագէտ Աստուծոյ առաջ վճռել է կանգնելու այն ճանապարհի վերայ, որ ես նրան ցոյց տուի, որպիսի յաջողութիւն է և որպիսի վարձատրութիւն ինձ համար: Որպիսի ուրախութիւն է ինձ համար: Ուրախութիւն Այժմ ուրախութիւն, չնայելով այդ զոհաբերութեան բոլոր դառնութեանը: Ես չէի կամենում ձեզ խաբել: Այլք կասեն ձեզ, որ Աւետարանի ճանապարհը լայն է, այլք կշողոքորթեն ձեզ: Նոքա ձեզ կասեն, որ քրիստոնէական կեանքն, ինչպէս նրան ես ձեզ նկարագրեցի և առաջարկեցի, մոայլ խորհրդաւոր բնաւորութիւն ունի, դժգոյն է, միակերպ և տխուր: Այդ մշտական խաբեբայութիւն է աշխարհի կողմից, մշտական սուտ, որ նա կրկնում է ամենքի առաջ, որոնք կամենում են հետևել Քրիստոսին: Այ. աւելի լաւ է, որ դուք հարցնէք նրանց, որոնք արդէն անցել են նեղ ճանապարհով. հարցրէք նրանց, ցաւում են արդեօք նոքա իրանց զրկանաց և զոհաբերութեանց համար. հարցրէք նրանց թէ արդեօք մարմնոյ և հպարտութեան բոլոր ցրնորքներն արժեն հոգւոյ այն անչափ երջանկութեան, հոգւոյ որ հաշտուել է Աստուծոյ հետ, ապրում է նրանով, որ ինչ արդար է, որ վստահ ու ապահով է իւր յաւիտենական երջանկութեան մասին. հարցրէք նրանց, թէ արդեօք բոլոր եսասիրական ուրախութիւնք արժեն սիրոյ մաքուր ուրախութեան, սիրոյ, որ աշխարհիս երեսին սկսուում է, որպէս զի երկնքում իւր անսահման կատարելութեամբ զարգանայ: Ո՛չ. Տէր, Դու մեզ չես խաբում, Դու մեզ հետ այնպէս չես վարուում, ինչպէս աշխարհը: Աշխարհը խոստանում է մեզ ուրախութիւն և տալիս է միայն դառնութիւն: Իսկ Դու—Դու խոստանում ես մեզ խաչ և տալիս ես պսակ: Աշ-

խարհը խոստանում է մեզ լայն ճանապարհը. բայց սա—անյուսալի մոլորութեանց և խաբէութեանց ճանապարհ է: Իսկ Դու—Դու—բաց ես անում մեր առաջ նեղ ճանապարհ, բայց սա տանում է երկինք: Ա՛հ, տո՛ւր մեզ ամենքիս երթալու նրանով, որպէսզի մենք հասնենք այն ճշմարիտ կեանքին, որոյ մէջ կարող կլինենք զարգանալ գիտութեան, սրբութեան, սիրոյ մէջ և անդադար նորոգուելըստ Քո պատկերի:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԻ ԳՐԻԳՈՐ ԵՒ ՈՒՐԱՅՈՂ ՅՈՒԼԻԱՆՈՍ.

III

(Նաղ—նաղ—նե—ն)

Այս բաղդաւոր կեանքից մի կամ երկու տարի յետոյ՝ Պոնտոսի վանքից հարկեցուցիչ պարտաւորութեամբ Գրիգորը Նազիանզ կանչուեց. եկեղեցին, ուր եպիսկոպոս էր նորա հայրը, և ինքն նորա հայրը նորա օգնութեանն ու ներկայութեանը շատ պէտք ունէին: Կոստանցիոսի դարը ժողովների դար էր. որոնց շատերը բոլորովին միասակար էին: Նա քրիստոնէական կատարեալ և պարզ կրօնքը, ասում է Ամմիանոս Մարցելիանոսը, շփոթում էր աղայական սնահաւատութեան հետ, և աւելի խճճումներով քան արժանաւոր կազմակերպութեան միջոցով շատ պառակտումներ առաջ բերեց. և այս յառաջ եկած պառակտումները աւելի ևս զօրացրեց բանաւոր հակաճառութիւններով: Եպիսկոպոսները այս և այն կողմը Ժողովէրէ զնալով, ինչպէս նոքա կոչում էին, ձգտում էին բոլոր կարգերը ենթարկել իրանց որոշումներին. և այդ միջոցով էլ Կոստանցիոսը շատ խանգարեց կայսերութեան սուրհանդակային (պօստ) ծառայութիւնը: Այդ դարու վէճերի առարկան էր բացառապէս Ա. Երրորդութեան մասին վարդապետութիւնը, որ 325 թուին ռազմանել էր Նիկիայի տիեզերական ժողովը, և Քրիստոսի անձնաւորութեան մէջ երկու բնութիւնների գերբնական, դժուարին և վերացական յարաբերութիւնը: Կոստանցիոսն աւելի